ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.-Եղեգնաձոր, Շահումյան 5

N 41 ,, 08 ,, մայիսի 2015թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության 2015թ. ,,Պետական բյուջեի մասին,, ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի, ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի բ/ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Եղեգնաձորի վետերանների տարածքային խորհրդի 2015թ. մայիսի 5-ի թիվ 50/70 գրությունը՝ Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 70-ամյակի օրվա կապակցությամբ ՀՀ Եղեգնաձորի վետերանների տարածքային խորհրդին օգնություն ցուցաբերելու մասին.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Այլ նպաստներ բյուջեից,, հոդվածով նախատեսված ծախսերից ՀՀ Եղեգնաձորի վետերանների տարածքային խորհրդի 14 վետերաններին օգնելու նպատակով հատկացնել 700000 /յոթ հարյուր / հազար դրամ միանվագ օգնություն:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում՝ այն փոխանցելով ԱՇԻԲ Եղեգնաձորի մասնաճուղում ՀՀ Եղեգնաձորի վետերանների տարածքային խորհրդի թիվ 24780017900 հաշվին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ